



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

✓ **Կարևոր է իմանալ**, որ երկրաշարժը երկրի մակերևույթի տատանումներն են՝ սեյսմիկ ալիքների տարածմամբ: Ալիքները տարածվում են ձայնի նման՝ հեռավորությունից կախված ուժգնությունը նվազելով: Երկրաշարժի օջախը, որտեղ սկսվում են ցնցումները, կոչվում է հիպոկենտրոն, իսկ մակերևույթի կետը՝ էպիկենտրոն: Մագնիտուդը սեյսմիկ ալիքների էներգիան բնութագրող մեծությունն է:

✓ **Հիշե՛ք**, որ նույնիսկ ուժեղ երկրաշարժերի ժամանակ շենքերը միանգամից չեն փլուզվում: Գյումրիի (9 բալ) ավերածությունների վերլուծությունը ցույց տվեց, որ 10 հարկանի շենքերը սկսել են փուլ գալ առաջին ցնցումից միայն 10-12 վայրկյան հետո: Դա այն արժեքավոր ժամանակն է, որի ընթացքում կարող եք կատարել կարևոր գործողություններ՝ փրկվելու համար:



📞 112 🌐 rescue.mia.gov.am



ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ


ԵՐԿՐԱՇԱՐԺ

ՆԳՆ փրկարար ծառայությունը հորդորում է քաղաքացիներին լինել իրազեկված և պահպանել զգոնություն:



Ի՞նչ ԱՆԵԼ ՆԱԽՔԱՆ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

- Աղետի արդյունավետ կանխարգելման բանալին պլանավորումն է:
- Երկրաշարժավտանգ գոտում իրականացրե՛ք նախապատրաստական աշխատանքներ, որոնք կարող են փրկել ձեր կյանքը:
- Պլանավորե՛ք, թե ինչպես եք երկրաշարժի դեպքում պաշտպանելու ինքներդ ձեզ, ձեր մերձավորներին ու ընտանի կենդանիներին:
- Ֆիքսե՛ք անվտանգ վայրերն առանց ընկնող ծանր իրերի, չֆիքսված կահույքի ու էլեկտրական սարքերի, որոնք կարող են վնասել ու հրդեհ առաջացնել:



Ձեր ընտանիքի հետ անցկացրե՛ք վարժություն.
«պառկի՛ր - մտի՛ր ծածկի տակ - մնա՛»

Հնարավորինս հասանելի պահե՛ք շտապ օգնության արկղիկը, դժվար փչացող սնունդն ու շշալցված ջրի պաշարը:



Ի՞նչ ԱՆԵԼ ԵՐԿՐԱՇԱՐՄԻ ԺԱՄԱՆԱԿ

- Պառկե՛ք գետնին կամ չորեքթաթ դիրքի եկե՛ք, այդպես ավելի հեշտ ու անվտանգ է տեղաշարժվելը:
- Մտե՛ք ծածկի տակ, լինի դա ճաշասենյակի սեղան, թե գրասեղան:
- Մնացե՛ք տեղում, մինչև ցնցումները դադարեն:
- Եթե մեքենայում եք, կա՛նգ առեք բաց վայրում, սակայն ոչ ծառերի կամ շենքերի մոտ: Մնացե՛ք մեքենայի մեջ և մի՛ վարեք երկրաշարժի ժամանակ:
- Ցնցումների ավարտից հետո մի՛ օգտվեք վերելակից, նախապատվությունը տվեք աստիճաններին:

Եթե դրսում եք, մնացե՛ք բաց տարածքում, հեռու ծառերից, շենքերից և հոսանքալարերից:



Ի՞նչ ԱՆԵԼ ԵՐԿՐԱՇԱՐՄԻՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ

- Ստուգե՛ք, արդյոք դուք և մնացածը վնասվածքներ ստացել եք, թե ոչ:
- Առաջին օգնություն ցուցաբերե՛ք բոլորին, ովքեր դրա կարիքն ունեն:
- Ստուգե՛ք գազի, ջրի և էլեկտրականության գծերի վիճակը: Գազի արտահոսքի դետեկտորը պետք է աշխատի: Եթե գազի հոտ եք առնում, բացե՛ք պատուհաններն ու դռները, լքե՛ք տարածքը և զանգահարե՛ք 1-04 (գազի վթարային ծառայություն):
- Զգուշացե՛ք փշրված ապակուց և սուր բեկորներից:
- Մի՛ ծխեք շենքի ներսում:
- Մի՛ մտեք վնասված ու վթարային շենքեր:
- Զանգահարե՛ք **112** ու **103**, եթե լուրջ վնասվածքներով մարդիկ կան, բայց մի՛ ծանրաբեռներ այդ հեռախոսահամարներն առանց իրական պատճառի:

Հիշե՛ք, ձեզ որոնում են և ձեր փրկության համար կօգտագործվեն բոլոր հնարավորությունները: